ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N_____

------- ----------2023թ.

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԿ
<<ՀԵՏՔ>> ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Պետրոսյան

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հունվարի 10-ի N հ-2 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի ագրեսիայի հետևանքով վնասներ են կրել մարզի Վարդենիս համայնքի Սոթք, Կութ և Վերին Շորժա բնակավայրերը:

Արտակարգ իրավիճակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասների գնահատման Վարդենիսի համայնքային հանձնաժողովի կողմից հաշվառվել են բնակավայրերի անհատական բնակելի տներին պատճառած վնասները՝ համաձայն որի Սոթք բնակավայրում վնասի չափը կազմում է 229371,894 հազար ՀՀ դրամ, իսկ Կութ բնակավայրում՝ 5086,9 հազար ՀՀ դրամ:

Սոթք բնակավայրում վնասվել են թվով 151 անհատական բնակելի տներ, որից 147-ը վերականգնման ենթակա, իսկ Կութ բնակավայրում՝ 10 անհատական բնակելի տներ, ամբողջությամբ վերականգնման ենթակա:

Սոթք բնակավայրում հրետակոծության հետևանքով ամբողջությամբ քանդվել կամ քանդման ենթակա են դարձել 4 անհատական բնակելի տներ, որոնց բնակիչները բնակվում են ժամանակավոր կացարաններում:

Վնասված անհատական բնակելի տների բնակիչներին տրվել է փոխհատուցում, բացառությամբ Սոթք բնակավայրի 2 բնակելի տների բնակիչների, որոնք գտնվում են ՌԴ-ում:

Վնասներ են կրել նաև Սոթք բնակավայրի դպրոցի և գյուղապետարանի վարչական շենքերը, բուժ ամբուլատորիան, իսկ Կութ բնակավայրում՝ դպրոցի և գյուղապետարանի վարչական շենքերը, որոնց պատճառած վնասները վերականգնվել են:

Восстановимая подпись

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049 ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Քաղաքաշինության վարչություն

Գ. Խաչատրյան
060 65 06 19